ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

23 հունիսի 2026 թ. N Ե-4107

«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
Գ. ԵՍԱՅԱՆԻՆ

Ձեր՝ 18.06.2026թ.
Մուտք՝ 18.06.2026թ. N S-1806

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Եսայան

Աբովյանի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և «Մեծ Ծիածան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև 11.05.2026 թվականին կնքվել է «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/44-1» ծածկագրով ապրանքի մատուցման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝
Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքներ, N 2 հավելվածով սահմանված ժամկետում (պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքները և վճարել դրանց համար:
Սակայն սույն թվականի հունիսի 18-ին «Մեծ Ծիածան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ստացվել է գրություն, այն է Աբովյանի համայքնապետարանի և «Մեծ Ծիածան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/44-1» ծածկագրով կնքված պայմանագրի N 1 չափաբաժինը (Աղբի տոպրակ 1) ընկերությունը հրաժարվում է մատակարարել, ընկերությունը հրաժարվում է կնքված պայմանագրի մասնակի կատարումից:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը

համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթներով՝ Աբովյանի համայքնապետարանի և «Մեծ Ծիածան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/44-1» ծածկագրով Պայմանագիրը N 1 չափաբաժնի համար մասնակի միակողմանի լուծվում է Գնորդի կողմից:

Այսպիսով՝ Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը կներկայացվի լիազոր մարմին՝ «Մեծ Ծիածան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացված ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով կներկայացվեն մատակարարին սպասարկող բանկ՝ պայմանագրի չկատարված մասի համար որակավորման 22 500 (քսաներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ և պայմանագրի 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ ապահովումները գանձելու նպատակով:

Ընդունել ի գիտություն.

Եթե «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերով և նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին և եթե մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվում է լիազորված մարմին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

Կատ. Գնումների բաժնի պետ
Ա. Ծատուրյան
+37460536402